ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ (ԷԱՃ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19-ը դեկտեմբերի 2018թ.
Ժամը 11[00]

Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի կողմից հայտերի բացումն իրականացվել է 17.12.2018թ., ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 19.12.2018թ., ժամը 10:00-ին: Աճուրդի ամփոփման արդյունքները ներառված են սույն արձանագրության մեջ:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի երկրատեղեկատվական և պլանավորման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ս. Պետրոսյան,

ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի սպա, մայոր Գ. Հովսեփյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Միքայելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Տ.Աբրահամյան:

19.12.2018թ., ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ.Աբրահամյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.eauction.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Տ. Աբրահամյան)

1.1 Ըստ **www.eauction.armeps.am** կայքի տվյալների՝ ՀՀ ՊՆ կարիքների համար **ապրանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1.	«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
2.	«Էյչ Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Տ.Աբրահամյան)

2.1 **Eauction** համակարգի կողմից չմերժված մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) **դիմում-հայտարարություններն** առկա են:

2.2 մասնակիցների կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունները** համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին),Բացառությամբ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը ստորագրված էր տնօրենի կողմից լիազորված անձի կողմից, սակայն լիազորագրի ժամկետը անցած էր: Մասնակիցը օրենսդրությամբ սահմանված ժամկետում

չտկել է անհամապատասխանությունը: Ի գիտություն՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը բարձր էր **Eauction համակարգում սահմանված նախահաշվային գնից**, ուստի վերջինիս հայտը համակարգի կողմից մերժվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

(Տ.Աբրահամյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում Eauction համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացվել են մասնակիցների **նախնական** և **վերջնական** գնային առաջարկները. **Տես Հավելված N 1:**

Հավելված 1

Չափաբաժնի համար		Ընկերություն	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ	50029000	45000000	20%	54000000	40907000	20%	49088400
1	2	Էյչ Գրուպ ՍՊԸ	50029000	44520000	20%	53424000	44074800	20%	52889760

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Տ.Աբրահամյան)

4.1 Հիմք ընդունելով Eauction համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացված **նախնական** և **վերջնական** գնային առաջարկները, ինչպես նաև համակարգի կողմից չմերժված մասնակիցների կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունների** գնահատման արդյունքները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչվեցին հետևյալ մասնակիցները՝ Տես Հավելված 1՝ ըստ նվազագույն գնային առաջարկների:

4.2 09.01.2019թ Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Տ.Աբրահամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Տ.Աբրահամյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱՌ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա.Հովսեփյան
Գնահատող		Ա.Պետրոսյան
Գնահատող		Գ.Հովսեփյան
Գնահատող		Ա.Միքայելյան
Հանձնաժողովի քարտուղար		Տ.Աբրահամյան